# ՀԱՆԴԷՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

## ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

## ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՅԻ

(Պր. ԼԹ, 92, 168, 285, — Խ, 93, 176, 284, 376)։

### ԳԼՈՒԽ ԺԳ.

*Պատրն. — Մարքէզին մահն։*

Պարոն Պրաւն միտքն գրածն յառաջ տանիլ ուզելով, և զԱննա ստիպելու համար որ դերասանութեան աւելի արուեստ յանձն առնու, աւստրիական ոստիկանութեան գլխաւորին դիմեց. և մարքէզ Սէնթ-Անժի վրայ չարախօսութիւն ընելով այնպէս ցոյց որ շատ վտանգաւոր մարդ մի է՝ իր նենգաւորութեանց և հասարակապետականաց հետ թղթակից լինելուն պատճառաւ։ Որչափ որ այս չարախօսութիւնս անտեղի էր, սակայն որովհետև ոստիկանութեան գլխաւորն բոլոր սրտովն կ՚ատէր զՓրրանկիացիս առ հասարակ առանց որոշելու հասարակապետականներն գաղթականներէն. ուստի շուտով հրաման ըրկեց մարքէզին որ Վեննայէն դուրս ելնէ և հեռու տեղ մի երթայ բնակի։ Այս հրամանս խեղճ պանդուխտ ընտանեաց համար մեծ թշուառութիւն մի էր, որովհետև մարքէզի յանցաւոր անխոհեմութեամբն աւուր հացի կարօտ վիճակի մէջ կը գտնուէին, և ուրիշ բանի վրայ յոյս չունէին՝ բաց 'ի Աննայի աշխատութենէն. և իրենց համար սահմանուած երկրին մէջ փոքրիկ քաղաքներ միայն գտնուելուն՝ Աննայի տաղանդն հոն անծանօթ ու թաղուած պիտի մնար և օգուտ մի պիտի չտանէր։ Եւ այս բանս տան մէջ ամենեցուն մտքէն ալ անցնելով դադրած ցաւերն նորէն սկսան և գոցուած վէրքերն միւսանգամ բացուեցան. մարքէզին հիւանդութիւնն ալ կրկնելով մազ մնաց կը մեռնէր։ Բըժիշկն Նայմէյեր, որ ալ այս ընտանեաց սրտակից բարեկամն դարձել էր և շատ կը ցաւէր ու կը սիրէր զնոսա՝ ինքն անձամբ եւ ոստիկանութեան գլխաւորին գնաց. բայց տրուած հրամանն ետ չկարողացաւ դարձնել տալ. սակայն գոնէ հիւանդին բժշկուելուն կամ մեռնելու ատեն գործադրութիւնն ուշացուց։ — Ոստիկանութեան պաշտօնէին այս վերջի խօսքերէս բժիշկն իմացաւ որ այս բանս յառաջագոյն կարգադրուած թշնամւոյ մի դաւանքն է. որովհետև այն հրամանն մարքէզին մեռնելէն ետքն ալ պիտի կատարուէր՝ որուն համար տրուած էր երկու խեղճ ու տկար կանանց դէմ՝ որոց վրայ ամենէն կասկածոտ և բծախնդիր ոստիկանութիւնն ալ փոքրիկ երկիւղ մի չէր կարող ունել. բայց այս թշնամութեանս որոյ բարձին տակէն լինելն չէր կարող գուշակել։ Սակայն երկու երեք օրէն ետք հիւանդն տեսնելու գնացել էր. Պարոն Պրաւն ալ հոն հասաւ և շատ ցաւ կը ցուցանէր՝ նոցա հանդիպած թշուառութիւնն նորլսած ձևացնելով. և անտի խօսք բացաւ և եցոյց թէ արքունի թատերաց դերասաններն՝ որչափ պաշտպանութիւն կը գտնեն այսպիսի դիպուածներու մէջ. յայտնապէս Աննայի խօսք իմացընելով որ եթէ իւր առաջարկութեանն հաւանէր՝ դաշնագրին թուականն ոստիկանութեան հրամանագրին թուականէն յառաջ դնելով, կարող էր այն հրամանն յետս կոչել տալու։ Այն ատենէն բժիշկն միտքն դրաւ որ այս անբատանութիւնս առնողն՝ նոյն ինքն պարոնն էր, որ և երկրորդ օրն ալ գալու խօսք տալով ել և գնաց։ — Երբ նա դուրս ելաւ, բժիշկն իւր կասկածներն մարքիզուհւոյն յայտնեց. նա ալ պատմելով բոլոր անցած դէպքերն՝ եցոյց թէ ինչպիսի անյաղթելի հակառակութիւն մի ունի այն արուեստին՝ որ իւր աղջիկն՝ իրենց տաղանդն ժողովրդեան հաճոյից համար ծախողներուն կարգն պիտի անցընէր. զոր լսելով բժիշկն՝ շատ գովեց և հաւնեցաւ նորա ասացածներուն, և խոստացաւ նմա որ թէ իւր և թէ բարեկամաց միջնորդութեամբն մեղմացընել տայ այսպիսի դառն հրաման մի՝ որ առանց պատճառի տըրուած էր այսպիսի անմեղ և անյանց ընտանեաց դէմ։ — Երբ պարոնն առջի աւուր խոստացածին պէս եկն, մարքիզուհին նորա խօսիլ սկսելուն չսպասեց. «Չեմ գիտեր, տէր, և չեմ ալ ուզեր գիտել, ասաց, թէ որոց ձեռքովն այս փորձանքս իմ և ընտանեացս գլուխն կը հասնի. և սակայն քաղքիս մէջ մարդու մի չարութիւն չեմք գործած կարծեմ, և յայսմ մասին խիղճ մի չունիմք։ Շնորհակալ եմ ձեր մեզ խոստացած պաշտպանութեանդ՝ որում այնպիսի պայման մի կը դնէք՝ զոր իմ պարտքս է բաց 'ի բաց մերժել։ Գիտցիք, տէր, որ եթէ Աննա խեղճ որբ մի ալ լինէր՝ մարդկային յետին թշուառութեան մէջ ընկած՝ ինքն մանկութենէն 'ի վեր կրօնից

digitised by A.R.A.R.@

տուրք սկզբունքին մնացած լինելուն համար՝ քրիստոնէութեան պարտուց դէմ եղած արուեստի մի տեսակէն անգամ այնքան սարսափէր որչափ ալ այնու իր խեղճ վիճակէն կարող էր ազատիլ: Ուր մնաց որ Աննա երեսի վրայ ձըգուած որբ մի չէ, նորա ծնողքն դեռ ողջ են, և իւր հայրն Փրանկից ազնուական ցեղերէն է, իւր մայրն ալ բաւական զօրութիւն ունի թըշուառութեան դէմ դնելու, որովհետև թշուառութիւնն մարդս անպատիւ չառներ, բայց ժողովրդեան անարգանքն ոչ երբէք յանձն կ՚առնու »:

— Ու ով է իւր մայրն, տիկին:

— Ձեր առջև կեցողն է:

— «Ա՜հ տիկին, գուշեց պարոնն, ինչպէս անտեղեակ էի ճշմարտութեան. եթէ գիտէի թէ Օրիորդն ձեր զաւակն է՝ ոչ համարձակէի նման այնպիսի առաջարկութիւն առնելու, որ յիրաւի զինքն վշտացուցած է. ներեցէք, տիկին, իմ ագիտութեանս, նոյնպէս և դուք Օրիորդ. յիրաւի ձեր ազնուական կերպէն, ձեր հմտութենէն և բովանդակ վարմունքէն պէտք էի ձեր ազնուական ծնունդն ճանաչել: Բայց թէպէտ եղած չարեաց դարման մի կարեմ տանել. և վստահ եղիք, տիկնայք, որ իմ ամեն ջանքս պիտի գործեմ ձեր հանգստութեան համար». ասաց և էլ մեկնեցաւ:

Յիրաւի այս մարդուս սիրտն չար չէր. միայն այն չէր որ աջաորին հրամանն կատարուի, այլ միայն զԱննա վախցնելով իւր առաջարկութեանն հաւանիլ և ստորագրել տալ կ'ուզէր. ուստի երբ իմացաւ որ մարքեզին աղջիկն է՝ իւր բարի զգացմունքն արթընցան, և մարքեզին վրան իբրև թշուառ եղբօր մի վրայ նայելով՝ գործածին վրայ զղջաց, ու անմիջապէս ոստիկանութեան պաշտօնէին երթալով՝ աղաչեց պաղատեց որ այն հրամանն ետ առնու. բայց չյաջողեցաւ: Պաշտօնէայն պատասխան տուաւ թէ արդէն կայսրն իւր ստորագրութիւնն դրած էր, և թէ ինքն հարցփորձ առնելով իմացել էր թէ մարքեզն Օրլէանի կողմնակցութենէն է, որով պէտք պիտի լինէր միշտ հսկելու նորա վրայ: Պարոնին աղաչանքն ընդունայն եղև նաև Լիխթէնշթայն իշխանին քովն, որ խոստացաւ՝ բայց բան մի չկարաց կատարել. ուստի ինքն ալ իւր պաշտօնին զբաղմանց պատճառաւ՝ ալ կարող չեղև այս բանիս ետևէն լինել: Միայն բժիշկն եղև որ իր խոստմունքն կատարեց, ու գալով երթալով և աղերսագիր աղերսագրի վրայ տալով՝ վերջապէս թոյլտուութիւն առաւ խեղճ ընտանեաց համար՝ որ Վիեննայի մօտ Պատըն ասացեալ քաղաքն բնակին:

— Այս փոքրիկ քաղաքս երեք հազար տեղացի բնակիչ ունի. բայց իւր ջերմուկներուն և հանքային ջրերուն պատճառաւ տարուէ տարի չորս հինգ հազար մարդ հոն կ'երթան: Մարքեզին բըժիշկն տէր Նայմէյէր այն քաղքին մէջ արուեստակից ու բարեկամ մի ունէր Շէնք անունով, որ քաղքին անուանի բժիշկներէն մին էր, և սովորաբար ամեն տարուան նմա կը դիմէին. ուստի մտածեց որ իւր արուեստակիցն շատ ծանօթ ու բարեկամ ունենալուն պատճառաւ՝ կարող էր Սէնթ–Անժի ընտանեաց օգտակար լինել և Աննայի տաղանդն շահաւոր գործել իւր ընտանեաց: Մարքեզն ալ այս լսելով հաւանեցաւ բըժշկին խորհրդոյն այն քաղաքն երթալու: Սեպտեմբերի վերջերն աշնանային գեղեցիկ օրով մի Վիեննայէն ելին, և երեկոյ չեղած կանուխէկ Պատըն հասին: Բժիշկն Շէնք ալ յառաջագոյն իր բարեկամին գրած նամակէն իմանալով նոցա գալուստն՝ գիւղագին ու հանգիստ տուն մի վարձել էր քաղքին մէջ տեղն, և պանդուխտ ընտանեաց հասնելու օրն ալ պատրաստած տան մէջ կը սպասէր զիրենք ընդունելու համար, և եթէ պէտք էր մարքեզն դարմանելու:

Ուղևորներն հասին և շնորհակալ լինելով բժշկին մտադրութեանն՝ շուտով մի տեղաւորուեցան: Տունն քաղքին ամենէն բարձր գիրքին վրայ շինուած էր, Գողգոթայ ասացեալ փոքրիկ լերին զառ 'ի վայրին վրայ որ Քահլէն լերանց մասն է: Զորս պզտի սենեակ ունէր. մին նախասենեակ, միւսն դահլիճ, երկու ալ խուցեր. դահլըճին պատուհաններէն որ դէպ 'ի հարաւ կը նայէր՝ Շուէշա գետոյն բոլոր ընթացքն կը տեսնուէր՝ որ պզտի գետ մի է ու Վիեննայէն ութ ասպարէզ վար Դանուբի հետ կը խառնուի: Մարքեզին խուցն Հանկ գըղեակին աւերակաց վրայ կը նայէր՝ որ նոյն տանեներն փլուցած էին, որովհետև երկայն տանեն երեսի վրայ Թիւրքերուն՝ չարագործաց որջ եղած էր: Աննայի խուցէն 1714ին կանգնուած սիւնն կ'երևէր, երբ այն տարին եղած ժանտամահն դադրեցաւ՝ որ Աւստրիոյ բնակչաց տասնէն մին առաւ տարաւ: Այս չորս սենեակէս զատ՝ վարի յարկն ալ ծառայի խուց մի և խոհանոց մի կար. այս էր բոլոր նոյն տան մէջ վարձած օթևանն. բայց որ լաւագոյն է՝ Մարիա-Թերէզա կայսրուհւոյն պարտէզին կամ ծառաստանին շատ մօտիկ էր՝ զոր հերուն շինած էին: Բաց աստի Պատընի շրջակայքն ալ շատ զուարճալի են, ու գեղեցիկ պարտէզներով և սիրուն տեսարաններով զարդարուած:

Պատընի ջրերն բովանդակ Աւստրիոյ մէջ հըռչակաւոր են. ուստի շատ հիւանդներ ու ախտաժէտներ հոն կ'երթան, ինչպէս նաև հետաքրքիր և զբօսասէր մարդիկ՝ որ գարնան ժամանակ այն քաղքին մէջ եղած զուարճութիւններն վայելելու համար հոն կը վազեն: Բժիշկն Շէնք՝ որ Աննայի կենակցութենէն շատ կախորժէր, որովհետև տեսեր թէ նորա չափ հըմուտ օրիորդ մի տեսած չէր, և ոչ ալ ստորական մի որ նորա պէս մաքուր խօսի գերմաներէնն, օր մի ասաց նմա՝ թէ այս ջերմուկներս Հռովմայեցւոց ժամանակն ալ ծանօթ էին, որովհետև 1764ին խուզարկութեան համար հողն բրած տանեն՝ հին շէնք մի գտնուած էր որոյ դըրան վրայ որոշ կը կարդացուէին այս բառերս Itermæ pannonieneses Ջերմուկք պաննոնիական [1]:

« Զանազան աստիճան ջերմութեամբ տասնու-

1 Հնախիկին Պաննոնիայի հիւսիսային սահմանն էր Դանուբ գետն, և նորա մէջ կը համարուէին բաց 'ի Աւստրիայէն, Կարնիոլէն, Դալմատիայէն ու Բոսնիայէն՝ նաև Սերվիայի, Հունգարիոյ և Աւստրիոյ մէկ մասն: Հռովմայեցիք առջի անգամ Յուլիոս Կեսարու առաջնորդութեամբ մտին այն երկիրն, բայց բոլորովին նուաճելն Տիբեր կայսեր ժամանակն եղև:

digitised by A.R.A.R.@

վեց ակունք կան, ասաց, քաղաքամերձերկուքէն մինչև քաղաքներին աստիճան բարեխառնութեամբ. մին շատ անուշահոտ է և սաստիկ թնդանօթի վառօդ կը հոտի։ Ականց գլխաւորն Ուրբարրունկ ատացեալն է, ուր որ ջուրն ստորերկրեայ քարայրի մի մէջ՝ ժայռէ փորուած աւազանի մի մէջէն կը բղխի. այս քարայրս երթալու համար գրեթէ քառահինգ մեր երկայնութեամբ ստորերկրեայ սրահակէ մի անցնելու է, և հոն ջուրն խիստ տաք է և գրեթէ ժամն քառորդ քառակուսի մետր ջուր կը բխի[1]։

Բժիշկն Շէնք երկու երեք աշակերտ գտաւ մարքէզին աշխարհն՝ որ իրենց կարօտութեան նայելով ոչինչ բան մի էր. Մարքէզն կատարեալ առողջութիւն գտած չէր, այլ միշտ տկար ու սրտաբեկ՝ իւր անցուցած զուարճալի կեանքն կը յիշէր, և չէր կարող ալ մոռնալ այն Մարտինեսի հետ հանդիպած չարաբաստ ծանօթութիւնն և անոր յառաջ եկած թշուառութիւնքն. այս անցքերս իրեն գտած յիշատակ մի էին, և այն յիշատակներէն մախաղութեան և արամութեան այնպիսի խորին զգացում մի եկած էր իւր վրայ՝ որ ամենևին չէր փարատեր, և կամաց կամաց իւր կեանքն կը մաշեցունէր։

Իսկ մարքիզուհին՝ արդէն տկար կազմուածք ունենալուն՝ դժուարաւ կը վարժէր ամէն բանէ զրկուած ու կարօտ կենաց։ Տիւպուա ալ թէպէտ առանց անգործանալու կը կրէր, սակայն տարիքն առած ու ալևորած լինելուն ծանր կուգար իրեն։ Մէջերնին միայն Աննա էր՝ որ իւր վիճակին բոլորովին համակամ՝ ոչ միայն իւր աշխատութեամբն իւր մօր ապրուստն կը հոգար, այլ և քաղցր մխիթարութիւններն պակաս չէր ըներ՝ զինքն համբերութեան յորդորելով, և ալ լաւագոյն օրերու յոյս ունենալու սիրտ տալով՝ ու կ'ըսէր. «Բոլոր վստահութիւննիս Աստուծոյ վրայ դնենք, մայրիկ, վասն զի ինքն ոչ երբէք ձեռքէ կը թողու զնոսա՝ որ հաւատքով և եռանդեամբ իրեն կը դիմեն։ Երեք աշակերտ ունիմ, որ թէպէտ Պատրոնի պէս փոքրիկ քաղաք մի համար շատ է, բայց կը յուսամ որ ջերմու և զուարճութեանց եղանակն որ գայ՝ նոյնպէս թիւն պիտի յաւելու։ Բարեբաղդաբար այնպիսի երկրի մի մէջ եմք՝ ուր ամէն բան դիւրագին է. ուրեմն համբերութեամբ տանինք մեր ներկայ վիճակին թշուառութեան. այս փորձի ժամանակէս ետև Աստուած մեզ լաւ օրեր ալ պիտի ցուցանէ»։

— Ա՜հ, սիրելի Աննաս, ես աւելի զքեզ կը կսկծամ, որ խաղաղ ու քաղցր կեանք վարելու համար ծնած լինելով բոլոր ծանկութիւնք մերիկներով, խաւարութեամբ, հոգերով աշխատութեամբ ու զրկողութեամբ կ'անցուցանես։ Գոնէ Վիեննա մնացած լինէաք....

— Վիեննա՞, ասաց Աննա նորա խօսքն հատանելով. ի գիտէ որ այս աղքատ՝ զոր գու թշուառութիւն կը համարիս՝ աստուածային նախախնամութեան գաղտնի հնարքն չէ զմեզ վտանգնե-

րէ ազատելու համար. ի գիտէ թէ այն մեր առաջև բացուած ապարանքն ու պալատներն՝ ինչ վտանգալից ժայռեր կը ծածկէին՝ ուր իմ անփորձութիւնս պիտի նաւաբեկէր ու խորտակէր։ Հաւատա ինծ, մայրիկ, մօրերնիս ու սրտերնիս Աստուծոյ հնազանդեցնեմք, և վստահ լինիմք որ աշխարհիս մէջ գիտնալով բան մի չլինիր, և կենաց դէպքերուն մէջ Աստուած ձիչդ այն բաներն կը ղրկէ մեզ՝ որ մեզ աւելի օգտակար են։

Աննա ոչ միայն իւր մայրն այսպիսի խօսքերով կը մխիթարէր, այլ աւելի ևս իւր հայրն իւր անուշիկ ձայնովն կը սփոփէր. զոր լսելով դժբաղդ մարքէզն՝ կարծես թէ իւր վիշտերն կը թեթևնային և ասէր. «Զաւակս, քու ձայնդ լսելու կարօտութիւն կը զգամ. վասն զի երբ քու քաղցր ձայնդ կը դադրի ականջէս՝ ձանձրոյթն զիս կը խղդէ, և հանգստութիւնս կը կորսուի. գու ես միայն, սիրելի Աննաս, որ գտա ասկաւ մի փափաքելի առնես ինձ այս կեանքս, և դու միայն իմ սրտիս վիրաց վրայ առողջարար սպեղանի մի կը սփռես. զիս իմ անձիս հետ կը հաշտեցնես, և աստուածային ողորմութեան ապաւինիլ կ'ուսուցանես. բայց գեռ գործած անիրաւութիւններս մօրէս չեն ելներ. երանի՛ թէ Աստուած իմ զղջմանս նայելով զիս այնչափ խստութեամբ չդատէր՝ որչափ որ սիրտս զիս կը դատէ»։ —

Երբ մարքէզն ղայս կը զրուցէր՝ Աննայի սիրտն ելնելով մօրովն ու սրտովն ամէն ջանք կ'ընէր զնա մխիթարելու. ծածուկ Աստուծոյ ալ կ'աղօթէր և կը պաղատէր որ տայ իրեն այն ձարտարխօսութիւնն որ միտքն կը համոզէ ու սիրտն կը շարժէ, որպէս զի իւր հայրն յուսահատութենէն ազատէ։ Աստուած ալ նորա հայցուածքն կը լսէր, և մխիթարական խօսքերն աղբիւրի նման նորա շրթունքէն կը բղխէին. և քաղցր արտասուք մարքէզին երեսն ի վար կը վազէին։ Այն ատեն Աննա ու մայրն յոյս կ'առնուին որ իրենց սիրալիր խնամքովն կարող պիտի լինէին նորա տրտմութիւնն փարատել, և սիրտն վիրաւորող նետն քաշել դուրս հանել։ — Ընդունայն յոյս. տարի մի այսպէս պանդխտութենէն ետև՝ բժիշկ Շէնքի ջանքն ալ պարապ ելին, և մարքէզն իւր կնոջ, զաւկին և հաւատարիմ Տիւպուայի բազկաց մէջ իւր հոգին աւանդեց. և անկեղծ արտասուք՝ նորա գերեզմանն թացին. Քանի մի տարիէն հաւատարիմ ծառայն ալ ծերացած ալևորած իւր տիրոջ ետևէն գնաց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

*Օրագրի նստուած մի։*

Մարքիզուհին Պատրոնի մէջ բնակիլն չէր ախորժէր, ուստի աւստրիական կառավարութենէն խնդրեց որ Վիեննա դառնայ. սակայն ընդունայն եղև և միայն զրաւ որ այլ իրենց վիճակին ամենևին լաւագոյն գտանալիք չունի։ Այն ատեն բժիշկ Շէնքի խորհրդովն քաղքին մէջի բնակարանն թողուց, և արուարձանին մէջ ուրիշ տուն մի վարձեց, ուր որ ինքն ու աղջիկն շատ աւելի մենաւորիկ բնակեցան. և երջանիկ կարող էին լինել՝ եթէ իւր սիրելի անձինքն կո-

1 Յունիս 1797 Ուրբարունկի քարայրին մէջ արևելեան ակով գեղեցիկ չէինք մի լինուեցաւ, որ շատ հանգիստ լինելուն՝ զարնան շատ հիւանդներ ու պարապորդներ հոն կը յաճախեն։

րուսանողն՝ երջանիկ կարող է համարուիլ, որոց հետ արեամբ և բարեկամութեամբ կապուելէն յետոյ՝ նոյա մեռնելովը մարդուս սրտին մէջ այնպիսի անդունդ մի կը բացուի՝ որ ուրիշ բանով չլեցուիր։ Աննա շատ կը ցաւէր հօրն ու Տիւպուայի վրայ. շատ անգամ իւր քոյրն ալ միտքն կու գար, որ թէպէտ իրեն շատ անիրաւութիւն գործել էր, սակայն իրեն այնպէս կու գար որ եթէ կամ զղջալով իր գործածներուն վրայ և կամ ուրիշ գիպուածով իրենց քովը գտնէր՝ անտարակոյս մեծ հաճութեամբ նորա հետ պիտի պլլուէր ու պագտուէր։ Մարքիզուհին ալ ճիշդ աղջկանը պէս կը մտածէր ու կը ցաւէր, իւր երկանն ու մեծ աղջկանն վրայ միշտ արցունք կը թափէր։

Սակայն այս չորս տարուան մէջ իրենց խաղաղութիւնն վրդովելու բան մի չհանդիպեցաւ. Աննա միշտ իւր երգի և դաշնակի դասերն առնելու հետ էր. և թէպէտ աշակերտներն շատուոր չէին, սակայն նոցա ամսականներն բաւական էին իւր և մօրն պիտոյքն հոգալու, որովհետև դժբաղդութիւնն խնայութեան ճամբաներն լաւ ուսուցել էր իրենց։

Տիւպուայի մահուանէն եւեւ հազիւ վեց ամիս անցել էր, ուստրիացի սպաներ երկայն պատերազմէ եւեւ՝ սակաւ մի հանգչելու համար՝ քանի մի օր Պատոնի ջրերն եկել էին. սոքա իրենց քովը եղած փրանկերէն օրագիրներն բժըշկին տուին, սա ալ համարելով թէ մարքիզուհւոյն և աղջկանն հաճոյ կ'անցնի իրենց հայրենեաց լուրերն նոցա ղրկեց. ուստի Աննա և իւր մայրն անյագութեամբ սկսան աչքէ անցունել այն թերթերն։ Բայց մտածէ միանգամ նոցա յանկարծական ցաւն՝ երբ մարքիզուհին սա տողերս սկսաւ կարդալ. «Փուրտ 14 (յուլիս 1794). Երեկուան օրն երբեմն ազնուականն Ֆարթոն իւր ոճրագործութեանց պատիժն կրեց. իւր վրայ ամբաստանութիւն եղած լինելով, յեղափոխական ատեանին առջև խոստովանեցաւ հասարակապետութեան դէմ գործած դաւաճանութիւններն, որով ատեանն միաբերան շատ ինչք և ստացուածք ալ խարդախութեամբ իրեն անցուցած էր. ուստի ատենէն եղած վճռոյն հաստատեցնելու համար՝ իւր ամեն ստացուածքն գրաւուեցան։ Իւր կինն ալ երբեմն ազնուական և գաղթեալ մի աղջիկն՝ հասարակապետութեան երկրէն դուրս աքսորուեցաւ, և զինուորներով հանդուցէ հանդոյց մինչև սահմանածայրն պիտի տարուի... Դատականքէն հասկցուեցաւ որ Ֆարթոն խարդախ ճամբաներով իւր աներն՝ որ բանտուորին վաղէ մի սպաներէն էր, մինչև սահմանածայրն տանել տուել է, և տոկալ է զնա օտար երկիր անցնելու, և ուզածն չյաջողելով՝ Արրասն բերդաքաղքին ատեանն ամբաստանել է զինքն սպաննելու մտօք. դարձեալ ասի թէ բոլոր դերդաստանին ինչքն ծածկապէս աճուրդի հանել է, և գինն աւելցուներն հեռացուցել է։ Իրեն խորհրդակից և գործակից գտնուել է մարսիլիացի խաժամուժին գլուխն Տ... անուամբ հաչակաւոր սիկարեանն կողմնակից Հէպէրթի. այս մարդս Ֆարթոնի իրեն հանած բաժնէն գոհ չլինելով՝ ամբաստանել է զինքն մեծապատիւ Ֆուքիէ-Թենվիլ քաղաքացուոյն, որ այս բանիս մէջ յանցաւորին դատապարտութիւնն խնդրելով իւր արդար և անողոքելի անկողմնակցութիւնն յայտնել է։ Սակայն այն մարսիլիացի ամբաստանողն ալ՝ իւր մատնութեան պտուղն չվայելեց, որովհետև ինքն ալ կառափնատեղւոյն վրայ կորեաւ՝ Ֆարթոնի դողութեան մասնակից լինելուն և այլ ոճրագործութեանցն համար»։

Այս հատուածս կարդալով՝ մարքիզուհին խռովեցաւ ու տակնուվրայ եղև. կարծէր թէ Ֆարթոնի խայտառակութիւնն իր վրայ անկանէր. յանցաւոր Եմիլի միջոցով իւր ծնողաց վրայ տարածուելով։ «Ո՛վ թշուառական աղջիկ, կը գոչէր ցաւագին, որպիսի փոխարէն կ'ընդունիմ քեզ ցուցած կոյր սիրոյս և անիրաւ նախապատուութեանցս. հիմա ի՞նչ պիտի գործես. արդեօք բաւական առաքինութիւն ունիս պարտաւորութեանցդ նեղ ճամբայն մտնելու, թէ Աստուած արդարապէս քեզ դէմ բարկացած՝ թողու պիտի զքեզ քու խղճիդ խայթերուն ձեռքն որ յուսահատութեամբ կորնչիս։ Ներէ՛ նմա, Աստուած իմ, և նորա սրտին մէջ փրկարար զղջում մի շարժէ»։ — Աննա ալ իւր մօր հետ կուլար. և որովհետև ցաւոց առաջին վայրկեանին մարդուս սիրտն մխիթարութիւն մի չէ կարող ընդունիլ, ուստի Աննա ալ զնա հանդարտեցնելու համար բան մի չխօսեցաւ. բայց երբ ցաւն ու վիշտն դուրս պոռթկաց և սկսաւ առատ արցունք թափել, Աննա իւր ցաւերն ծածկելով քաղցր և համեղ ձայնովը՝ որով շատ անգամ մօրն սիրտն խաղաղել ու մխիթարել էր, ասաց. «Իրաւ, մայր, Աստուած արդար է, բայց միանգամայն ողորմած ու գթած է. անշուշտ Եմիլին սիրտն պիտի շարժէ, և օր մի զինքն իւր մօրն և քրոջն սիրոյն պիտի դարձնէ»։ Մարքիզուհւոյն սիրտն ելած՝ գլուխն զաւկին սրտին վրայ կռթնցուցած՝ որ իրեն պլլուած կեցած էր, ասէր. «Խեղճ Աննա, եթէ դու քովս չլինէիր, եթէ քու սէրդ չլինէր, ես ի՞նչ պիտի լինէի. և այսչափ ատեն ես զքեզ չճանչցի, զքեզ արհամարհեցի. ա՜հ իմ զաւակս. ա՜հ, սա՛ քու մօրդ որ ինձ ներել ես»։ Աննա լեզուն բռնուած պատասխան տալու տեղ՝ ալ աւելի զնա կը գրկէր ու կը պագնէր։

Երբ այս սարսափելի յուզմունքս սակաւ մի դադրելով՝ սրտերնին հանդարտեցաւ, Աննա մօրն իմացուց թէ որչափ հարկաւոր էր որ այս եղածս ամենէն և նոյն իսկ բժիշկէն անգամ ծածուկ պահէին. «Երբ զմեզ Վիեննայէն վտարեցին, ասաց, խեղճ հօրս վրայ յանցանք ձգեցին՝ որպէս թէ իւր թագաւորին թշնամեաց հետ կուսակից է. արդ եթէ իմանան որ այս թշուառական Ֆարթոնն իմ քրոջս այրն է եղել, ո՞ գիտէ ինչ չեն առներ մեզ։ Մի՛ գուցէ իմանան որ այս անօրէն մարդս մեզ ազգակից է. դու ալ, մայր իմ, ջանա՛ զինքն մաքէդ հանելու, և բաւական ունեմք աստուածային գթութեան զինքն յանձնելու, եթէ վերջի ժամուն գործածին վերայ զղջացել է՝ ինչպէս որ կը յուսամք, թերևս այն յետին պահուն ամեն ազատութեան յոյսն կորուսած տեսնելով կրօնից օգնութիւնն խնդրել է՝ անողոքելի դատաւորին առջև ելնելու համար»։

digitised by A.R.A.R.@

## ԳԼՈՒԽ ԺԵ.

*Պառընի աւագերէցն. — Եկեղեցւոյն երգեհոնն.*

Աննա իւր հօրն մեռնելէն 'ի վեր' սովորութիւն ունէր երկու օրն մի անգամ սուգի զգեստով և երեսն սեւ քօղ մի ձգած՝ ժողովրդապետական եկեղեցին երթալ և նորա հոգւոյն համար աղօթել։ Շատ անգամ զինքն տեսնելով և նորա պարկեշտ ու ջերմեռանդ կերպն դիտելով՝ շատ շնորհուել էր նորա վրայ աւագերէցն, (որ եօթանասուն տարուան պատկառելի ծերունի մի էր ժողովրդեան սիրելի և ամեն առաքինութեանց օրինակ)։ Որ մի տեսնելով որ այս աղջիկս սովորականէն աւելի կ'երկարէ իւր աղօթքն, վախցաւ որ մի գուցէ մարմնեղէնի պէս բան մի եկած լինի վրան, և իւր սովորական բարեսիրութեամբն՝ զոր ամենուն վրայ կը տարածէր՝ յուշիկ յուշիկ նմա մօտեցաւ՝ որ եթէ բան մի պէտք է՝ առնէ, իսկ թէ չէ՝ նորա աղօթիցն արգելք չլինի։

Աննա որ ինքն իրմէ դուրս ելած՝ աղօթքի հետ էր, նորա գալն և չորս հինգ քայլ իրմէ հեռու կանգնիլն չիմանալով հառաչանօք ու եռանդեամբ կ'աղօթէր, և մերթ ընդ մերթ քանի մի խօսք կը լսուէր նորա բերնէն և իւր սիրան Աստուծոյ առջև կը բանար, այնչափ միամտութեամբ որ բոլոր աշխարհ աչքէն աներևոյթ եղած էր, որպէս թէ Արարչին և իւր արարածոյն մէջ իւր աղօթքէն զատ ուրիշ բան չլինէր։ «Աստուած իմ, կը գոչէր, ողորմէ նորա հոգւոյն, իմ քրոջս վրայ ալ գթա. Աստուած իմ մօրս վրայ ալ քու սուրբ մխիթարութիւններդ սփռէ, ինձ ալ ոյժ տուր որ խեղճութեան դիմանամ. եթէ քու կամքդ է նեղութիւն նեղութեան վրայ զրկէ ինձ, բայց միանգամայն տուր քու զօրութիւնդ նոցա համբերելու. Աստուած իմ մի թողուր զմեզ քու ձեռքէդ»։

Ծերունի աւագերէցն՝ ալ չդիմացաւ ու Աննայի մօտենալով, «Ինչո՞ւ կուլաս, զաւակս, ըսաւ. քու խնդրած ոյժդ և համբերութիւնդ Աստուած քեզ պիտի տայ. վասն զի ինքն բարեգութ հայր մի է, և իւր ականջն միշտ բաց է իւր զաւակաց աղաչանքին. միշտ վստահութեամբ իրեն աղաչէ, և ինքն քու վշտացդ մէջ զքեզ կը պաշտպանէ. ահա ես ալ քու հետդ կ'աղօթեմ և կը խնդրեմ՝ որ քեզ միշտ հովանի լինի, երկուցնիս աղօթքն միանալով այլ աւելի շուտ կը թռչին դէպ 'ի երկինք», ասելով բարի քահանայն նորա մօտ ծնգան վրայ եկաւ, և նորա համար աղօթեց։ — Աննայի սիրան ելնելով սկըսաւ լալ ու քաղցր արտասուք թափել. վասն զի այն պատուական ծերունւոյն իր վրայ ցուցած սէրն, նորա բերնէն ելած անոյշ խօսքերն՝ կ'իմացնէին թէ գժբաղդութեան դէմ կրած պատերազմին մէջ մինակ չէր. հապա Աստուած իրեն օգնական, առաջնորդ ու մխիթարիչ մի կը ղրկէր. ուստի քաջալերուած՝ սիրան նմա բացաւ, որովհետև գժբաղդներու բնական բան մի է՝ իրենց քաշածն ուրիշի զրուցելն։ Քահանայն ալ միամտութեամբ մտիկ անելով նորա խօստովանութեանն՝ կը զարմանար ու կը հիանար անբծութեանն ու մաքրութեանն վրայ. և ասաց, «Սիրելի զաւակս, Աստուած քու օրերդ պահէ ու պահպանէ մօրդ և քրոջդ երջանկութեանն համար»։

Յետոյ հարցուց նմա թէ ինչ արուեստ կը բանի, ով են իր ծնողքն և ինչո՞վ կ'ապրին. ու երբ իմացաւ. «Ա՜հ, դու մայրեկղ Սէնթ-Անժի աղջի՞կն ես, ես քու վրադ 'ի վաղուց լսած եմ, և կը տեսնեմ որ ասացածներն չեն խաբուած. հա՛պա, զաւակս, սիրտ առ. քաջալերուէ, Աստուած օր մի քու առաքինութեանցդ վարձքն պիտի տայ, և գրեթէ կը յանդգնիմ գուշակելու՝ որ ինքն պիտի դարձնէ ձեզի այն մոլորեալ ոչխարն՝ զոր խռովութեան մրրիկն ձեզմէ զատել է»... Երէցն սակաւ մի մտածելէն ետև, «Միտքս բան մի եկն, ասաց, դու երաժիշտ և դաշնակահար ես, ասացիր, դաշնակն ու երգեհոնն իրարու նման են, արդեօք վաղիւ ձայնաւոր պատարագին կարո՞ղ ես երգեհոնն հարկանել. շատերն ասեն թէ մեր երգեհոնն՝ յոյժ ընտիր է, բայց վեց ամսէ 'ի վեր մեր երգեհոնահարին մեռնելով՝ իւր տեղն մարդ մի դեռ չկարողացաք գտնել՝ որ ժողովրդեանս ալ մեծ զրկում մի է։ Երիտասարդ եղած ժամանակս՝ ես ալ կը հարկանէի, բայց հիմա ալ մատուըներս բթացեր են, մանաւանդ որ թէ խորանին և թէ երգեհոնին միատեղ չեմ կարող հասնիլ»։

— «Փորձած չունիմ, ասաց Աննա վախկոտութեամբ, և չեմ գիտեր թէ արդեօք երգեհոն կարե՞մ հարկանել թէ չէ. բայց թէ որ սակաւ մի ժամանակ ունիք և թէ կը հաճիք մի անգամ փորձեմ»։

— «Իմ ուզածս ալ այս է, ասաց քահանայն, ետեւէս եկ»։

Աննա երգեհոնին վրայ եղած չորականն բանալով և ահա նորա թեթև մատանցներքև փանդիռներն այնպէս դաշնակաւոր ու գեղեցիկ սկըսան հնչել՝ որ աւագերէցն յափշտակուած ու խազերուն վրայէն աչքն չվերցնելով էջերն աւարտելուն պէս թղթերն դարձնէր ու կը նայէր և տեսէր. «Շատ լաւ, շատ լաւ. յիրաւի, դու երգեհոն հարած չե՞ս, և սակայն Ճիշդ մեծ վարպետի կերպ ունիս»։ Այս ասացած ատեն՝ Աննա յորդորակ կէտի մի հասնելով՝ ալ երգարանին չէր նայեր, այլ իւր փափուկ ախորժակին և վառ երևակայութեանն հետևելով՝ քանի մի վայրկեան այնպիսի յանպատրաստից եղանակ մի հնարեց՝ որ քահանայն բոլորովին հիացած՝ շունչն ևս կը բռնէր՝ որ եղանակէն կէտ մի ևս չփախցնէ. և իւր զարմանքն ապշութեան ծայրն հասնելով՝ ասաց որ այսպիսի հաճոյք ոչ երբէք զգացել էր. «Ա՜լ հերիք է, վաղուան համար ինձ խօսք տուր»։

Երկրորդ օրն Աննա բոլոր պառընցիներն հիացուց, այնչափ որ եթէ եկեղեցւոյ մէջ չլինէին՝ ծափահարութեամբ զինքն պիտի գովէին. պատարագէն ետև իրենցմէ մեծերն աւագերիցուն ուրախակցութեան գնացին այնպիսի վարպետ երգեհոնահար մի գտնելուն համար, որ առանց չափազանցութեան իր նախորդէն տասն անգամ աւելի տաղանդ ունի ասէին։ — «Տեարք ասաց աւագերէցն, ես ալ ձեզ չափ կը փափա-

digitised by A.R.A.R.@

քէի որ այս երգեհոնահարս մեր քով մնար. բայց չեմ կարող ձեզ խոստանալ. հիմա ինքն ալ հօս պիտի գայ, և Թերևս դուք և ես 'ի միասին աղաչելով՝ նորա կամքն առնեմք ու զինքն հաւանեցնեմք »: — Այս ատելուն Աննա ներս մտաւ. « Ահա մեր երգեհոնահարն, ասաց առաջերէցն ժպտելով: — « Ինչ, կին մարդ է, գոչեցին պարոնցիք, և դեռ մանկահասակ է. զարմանք »: Ու միջերնէն ամենէն հարուստն, կամ այն որ զինքն այնպէս կը համարէր Աննայի մօտելով՝ քաղաքավար շնորհակալութիւն մի արար իրեն, և յանուն Պատընի ժողովրդեան աղաչեց նմա որ եկեղեցւոյն երգեհոնահարութեան պաշտօնն իւր վրայ առնու. « Այս խնդիրքս ձեզ առնեմ բոլոր ժողովրդեան և եկեղեցւոյս իշխանաց կողմանէ, որովհետև պատիւ ունիմ նոցա նախագահն կոչուելու: Չեմ գիտեր Թէ Փրանկլին մէջ սովորութիւն կա՞յ Թէ չէ՝ որ կանայք եկեղեցւոյ մէջ երգեհոնահարութիւն առնեն. բայց հօս մեր մէջ որ շատ կաթողիկեայ եմք՝ սովորական բան է: Շատ ժամանակ չկայ որ Վիեննայի մայր եկեղեցւոյն երգեհոնահարն կին մի էր. այս աւուր օրս ալ Հօֆ հրապարակին մէջ եղած եկեղեցին՝ որ առենօք Յիսուսեանց էր և հիմա ժողովրդապետական եկեղեցի է՝ երգեհոն հարկանողն կին մի է. Պատընէն ութսուն աստղաչափ հեռու Կրեմս քաղաքն ալ նոյնպէս կին երգեհոնահար մի ունի »: Առաջերէցն ալ այն մարդուն առաջարկներն հաստատելով՝ ալ առանց խօսքն երկայնելու՝ որոշեցին ու եկեղեցւոյն երգեհոնահարութիւնն Օրիորդ Աննա Սէնթ-Անժի յանձնեցին՝ երեք հարիւր ֆիորին Թոշակով:

Այս լուրս Թէ քաղքին և Թէ արուարձաններուն մէջ շուտ մի տարածուելով՝ բժիշկ Շէնք ալ լսեց և շատ ուրախացաւ. ու հետևեալ օրերն եկեղեցին գրեթէ միշտ լեցուն էր հետաքրքիրներով: Այս բանէս Աննայի ալ մեծ օգուտ եղև, որովհետև պարոնցոց շատերն ուզեցին իրմէ դաշնակի դաս առնուլ, և ութ օրուան մէջ իր աշակերտաց Թիւն ութ կամ տասն եղան. որոց ամսականն յեկեղեցւոյ առածին հետ միատեղ՝ բաւական գումարիկ մի լինելով՝ կարող էր ամէն պէտք եղածն հոգալ և իւր մօրն մոռցնել տալ իր կորուսած մեծութիւնն: Այսպէս հոլովեցան Տիւպուայի մեռնելէն ետև անցած երեք տարիներն:

Կը շարունակուի.

Սակայն Վիեննայի Նայմէյեր պատուական բժիշկն՝ մարքէզ Սէնթ-Անժի այրին և աղջիկն չէր մոռցած. ուստի երբ ոստիկանութեան պաշտօնեայն մեռնելով՝ նորա տեղն ուրիշ մի անցաւ՝ զոր ինքն վտանգաւոր հիւանդութենէ մի բուժած էր, ել գնաց նոր ոստիկանն բարևելու, և այն երկու փրանկիացի տիկնայց համար խօսելով ու պաշտպանելով, և նոցա երաշխաւոր լինելով՝ աղաչեց որ հրաման տրուի Վիեննա դառնալու. ոստիկանն ինքզինքն երջանիկ սեպելով՝ որ արդարութեան գործով մի իր անձնական երախտագիտութիւնն մասամբ իւիք իւր բժշկին պիտի ցուցանէր, շուտով հրաման տուաւ որ դառնան: Բժիշկն հրամանագիրն առածին պէս՝ երկրորդ օրն կանուխ Պատըն երԹալու ճամբայ ելաւ. չէր ուզեր որ այսպիսի ուրախալի աւետիս մի ուրիշի ձեռօք հասնի Տիկին Սէնթ-Անժի. և իրիկուան բժիշկ Շէնքի հետ նոցա տունն գնաց, զոր տեսնելով յոյժ ուրախացան՝ իրենց մտերիմ բարեկամն երկայն տարիներէ 'ի վեր տեսած չլինելով: Երբոր նոցա իմացուց իւր գալուն պատճառն, այն խեղճերուն ուրախութեանն ու ցնծութեան չափ չկար:

Աննա, մարքիզուհին և իրենց գերմանացի աղախինն՝ որ իրենցմէ չէր ուզեր բաժնուիլ, շուտով սկսան ճամբորդութեան պատրաստութիւն տեսնել: Նայմէյեր բժիշկն իրենցմէ յառաջ Վիեննա դառնալու ժամանակ՝ խոստացեր էր որ կառք ու ձիեր ղրկէ իրենց, որք երկու օրէն հասին: Նոյն միջոցին Աննա և իւր մայրն՝ ծանօթներու մնաս բարով ըսին, և ամենն ալ նոցա երԹալուն վրայ կը ցաւէին, որ իրենց սիրտն ալ շնորհակալութեամբ լցուց, և իրենք զիրենք երջանիկ կը սեպէին՝ գրեթէ բոլոր քաղքին յարգութեան և սիրոյ նշաններն ու յիշատակն իրենց հետ տանելով:

Առաջերէցն ու բժիշկն մինչև վերջին վայրկեանն մարքիզուհւոյն հետ մնացին, ու երբ կառքն հեծան՝ ու պիտի ճամբայ ելնէին, բժիշկն ասաց որ իւր բարեկամին ու արուեստակցին բախտին վրայ կը նախանձէր. առաջերէցն ալ զանոնք օրհնելու ժամանակ՝ մարքիզուհին ու աղջիկն լալով նորա ձեռքն պագին ու արտասուօք Թրջեցին: Քանի մի վայրկեանէն կառքն սկսաւ քալել ու Վիեննայի ճամբայն բռնեց. առաջերէցն ալ երկար ատեն աչքն յառած նոցա ետևէն կը նայէր:

Տը Մարլէս

---


ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

# ՀԱՄԱՌՕՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

*ի պէտս ազգային դպրոցաց*

## Հ. ՀՄԱՅԵԿԱՅ Վ. ՊԱՊԻԿԵԱՆ

( Տես տեղեկութիւնը ԲԱԶՄԱՎԷՊԻ կողքին վրայ ):


digitised by A.R.A.R.@